

պիտի թելադրէին ատոր ալ գործադրումին ժամանակը: Յետո՞յ: Աստուծոյ գիտնալիքն էր ատիկա: Ուսուցիչին վերջին խօսքերն էին, կայարանի ճամբուն. -վստահիլ գեղերուն, որոնք օտարը կը պաշտպանէին, դեռ չաւրուած բարոյականի մը ցուցմունքովը եւ կը ջանային տուն-տեղ ընել զայն, սանկ տուն-մնայ աղջիկ մը (քաղաքի երեսուն-նոցները չանցնին ձեր մտքէն, աղէտի մը գնով նշանածը կորսնցուցած ու նորի մը չարժանացած վարդի պէս աղջիկը, քսանէն երկուք-երեքով վար, տուն-մնայ կը սեպ-ւի) կամ թարմուկ այրի մը դնելով անոր կուշտին: Այսպէս ամուսնութիւններ բազմաթիւ էին: Վստահիլ գեղերուն, բայց երբեք չբացուիլ անոնց, վասնզի այդ մարդերը տարբեր էին իբր իմոր Վասպուրականի եւ Տարօնի գեղացիներէն: Չէին մոռցած իրենց ազգը: Բայց զայն սիրելու ձեւն ալ անծանօթ էր իրենց: Բացի եկեղեցիէն, ուր կը զգային իրենց տարբերութիւնը թուրքէն, եւ խուլ այն տառապանքը, զոր թուրքերու բռնութիւնը շամանդաղի նման կ'աղար անոնց գլխուն, չունէին ուրիշ հոգ: Հաց ու կնիկ: Հող ու դաւակ: Պիտի չհասկնային բոլոր Մաթիկները: Այս դիտողութիւնները անշուշտ անիմաստ, չըսելու համար հոսհոսական էին ընկեր Մաթիկին, որ ականջին հաւատարիմ, առաջին գործը պիտի ընէր, առաջին հանդիպած գեղին մէջ վարժապետ փնտռել ու անոր ուշացած պարագային, չկրնալով զսպել իր անհամբերութիւնը, գեղացիներուն հետ վէճի սկսիլ: Խրիմեան քննադատելով, գիտնալով հանդերձ, որ այդ անունին արտասանութիւնը բաւ էր զինքը փորձանքի ածելու, դեռ Կիլիկիոյ դռներէն:

Ուսուցիչը թելադրեց դարձեալ շատ չերեւալ, այսինքն՝ զգուշանալ, ուշադրութիւն հրաւիրող արարքներէ, մա'նաւանդ աղաներուն հակառակ դատերու պաշտպան կանգնելով: Երկու օտարական թուրքին մէջ կը խեղդուէին: Չվստահիլ Կեսարիոյ կառավարիչին վկայագրին ու անցագիրներու անթերի օրինականութեան: Թուրքերը իրենց թքածը իրենք լգելու մեծ ախորժակ